տարակէ իւր ճանապարհորդական Ռուսիոյին մէջ ։ Եւ աւելի զարմանալին այս է, որ Պետերբուրգի Հոգեւոր Սինոդն եւս, առանց առարկելնին յաւելու, կը վաւերացնէ սոյն Գիրքն, որ իբրեւ կարեւոր Ճանապարհացոյց եւ Տեղեաց հարիւրներով կը տարածուի ժողովրդեան մէջ, որոնք հազարներով յԵրուսաղէմ կը գան, թող չեկողներու մէջ տարածուածներն ։ քանզի Հեղինակն կը յայտնէ յառաջաբանին մէջ թէ՝ յօրինած է ոչ միայն բարեպաշտ ուխտաւորաց համար, այլ եւ նոցա համար, որք փափագ ունին, բայց պարագաներէն կ'արգելուին ճանապարհորդել 'ի Պաղեստին, ուստի եւ սոյն պատկերազարդ Ուղեցոյցն առաջի աչաց ունենալով եւ կարդալով կարող են մասամբ իրենց փափագն լրացընել եւ մխիթարել ։

Երբ Սիրոյ եւ Ճշմարտութեան Աւետարանի պաշտօնէութիւնն այսքան կը քօղարկէ մոլեռանդութիւնն ու անաչառութիւնն, 'ի հարկ է ժողովրդոց մէջէն չեն վերջանար բնաւ ատելութիւնն, խռովութիւնն, թերահաւատութիւնն, նիւթապաշտութիւնն եւ այլն ։

Ցաւալին այս է, որ մեր խեղճ Ազգն, ողորմելի Ազգն, Քիւրդերէն աւելի Քրիստոնեաներէն կը նախատուի, կ'անարգուի, եւ դարձեալ առանց զգալու եւ զգաստանալու՝ 'ի նոցանէ օգնութիւն կը յուսայ, բարութիւն կը յուսայ, փրկութիւն կը յուսայ ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Անգղիական երեք զրահաւոր նաւեր խարիսխ ձգած են Ցափփէի նաւահանգստին մէջ, յորոց իւրաքանչիւրն կը պարունակէ 800 զինուորներ եւ զօրականներ ։ Սոյն զինուորական նաւուց ընդհանուր Հրամանատարն յԵրուսաղէմ եկաւ 200 զօրականներով եւ Տեղւոյս Կառավարութեան կողմէն ընդունեցաւ պատուաւոր զինուորութեամբ ։

Յիշեալ նաւուց զինուորներն եւ պաշտօնակատարներն կարգաւ 60 չափ հատ պիտի այցելեն Երուսաղէմն եւ դառնան ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ԵՒ

ՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Երկասիրութիւնք

Խրիմեան Հայրիկի ։

Սոյն Երկասիրութեանց առաջինն հրատարակուած է արդեամբ Գերապատիւ Աստուածատուր Ջունդ Ասլեանի. իսկ երկրորդն Ազնուամեծար Յակովբ Էֆէնտիի Նորատունկեան ։ Արարատեան Հրաւիրակն երկրորդ տպագրութեամբ է, որ 'ի լոյս կ'ընծայուի եւ իւր բովանդակութիւնն ծանօթ է արդէն ընթերցող հասարակութեան ։ իսկ Դրախտի Ընտանիքն առաջին անգամն է, որ լոյս կը տեսնէ ի պէտս Հայոց Ընտանեաց ։

Սոյն երկասիրութիւնն ուշ մեր ձեռքն հասաւ ։ ուստի եւ գրական գնահատութիւնն ուրիշ անգամի կը թողումք ։

ԿՐԹԱՐԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԴԱՍ Զ.

ՀԵՐՄԱՍ ԵՒ ՈՆԵՍԻՄ

Գին 60 փարայ ։

digitised by A.R.A.R.@